

## ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՀԱՅԱՏԱՌ ՄԱՄՈՒԼԻ

### ՆԵՐԿԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Կը գտնուինք քսաներորդ դարու առաջին ցեղասպանութեան հարիւրամեակի սեմին: Գրեթէ նոյն տարիքը ունի հայ ժողովուրդին պարտադրուած նորագոյն սփիւռքը: Շուրջ հարիւր տարեկան է նաեւ այդ սփիւռքին Միջին Արեւելքի հայ մամուլը:

Լեզուի նահանջը ընդհանուր երեւոյթ է ծննդավայրէն խլուած հաւաքականութիւններու համար: Միջին Արեւելքի մէջ, Տեղասպանութենէն ետք, հայերէնախօսութիւնը կարելի եղաւ ընդունելի մակարդակի վրայ պահել առնուապէս երեք-չորս սերունդ: Այդտեղ, հայ համայնքներու թուական, ժողովրդագրական (դեմոկրաֆիք) խտութիւնը, կառոյցներու բազմակողմանի ցանցը եւ անոնց ամբողջութեան փոխներգործութիւնը ազգային գիտակցութեան կազմաւորումին ու անոր պահպանումին էական տարրերը կազմեցին: Իսկ լեզուն, այս պարագային՝ արեւմտահայերէնը, շաղախը հանդիսացաւ այս բոլորին:

Միջին Արեւելքի մէջ, հայկական կառոյցներու եւ մասնաւորաբար հայերէնախօսութեան գոյատեւումը ապահովող քաղաքական, տնտեսական եւ ընկերային պայմանները արդէն նոյնը չեն, չէին ալ կրնար ըլլալ, յարափոփոխ կացութիւններու պատճառով:

Մենք՝ որ մայրենին նկատած էինք եւ դեռ կը նկատենք մեր ազգային ինքնութիւնը սահմանող կարեւորագոյն ազդակներէն, այսօր, դժբախտաբար, վկաներն ենք դարձած անոր աւելի քան մտահոգիչ նահանջին, նոյնիսկ՝ փլուզումին, որ իր կարգին կ'առաջնորդէ ինքնութեան խաթարումին:

Վերջերս, նոյնիսկ մեր մօտ, գլուխ ցցած է երեւոյթ մը, որ զանց

կ'առնէ լեզուին կարեւորութիւնը որպէս մշակոյթ փոխանցող հիմնական առանձնայատկութիւն: Շատ վտանգաւոր երեւոյթ է այս դիրքորոշումը, ընդունելով հանդերձ անխուսափելիութիւնը հայերէնախօսութեան 'սահանջին' սփիւռքի ամբողջ տարածքին, տեղ մը արագաքայլ, ուրիշ տեղ մը՝ նուազ արագութեամբ:

Երկու-երրորդով սփիւռքացած ժողովուրդի մը համար, որ մերինն է, ռազմավարական կենսական ինդիք է իր ապագային մասին համապարփակ լուծումներ որոնելը: Համաշխարհայնացումի համայնակուլ արշաւին դիմաց, հայ նորահաս սերունդին ազգային պատկանելիութեան գիտակցութիւնը եւ անոր ամրապնդումը գերինդիք է մեզի նման փոքրաթիւ եւ աշխարհագրականօրէն դիրաբեկ ազգի մը համար: Հայրենի հողին վրայ բնականօրէն կը մարմնաւորուի ազգային ինքնութիւնը: Սփիւռքի մէջ սակայն, գոյատեւելու էական միջոցը կը շարունակէ մնալ լեզուն, ոչ իբրեւ հաղորդակցութեան միջոց միայն, այլ ազգային մտածողութիւն ստեղծող ազդակ, որ կը բացատրուի «լեզուամտածողութիւն» բառակապակցութեամբ:

Յետեղեռնեան առաջին տասնամեակներուն հայերէնի տիրապետութեան (խօսք եւ գիր) հիմնական դարբնոցները հանդիսացան հայ դպրոցն ու մամուլը, այս վերջինը իր վանապան արտայայտութիւններով, առանց թերագնահատելու ընտանիքին, եկեղեցիին եւ ակումբին դերակատարութիւնը այս առընչութեամբ:

Միջին Արեւելքի երկիրներէն՝ Լիբանանը հանդիսացաւ այն բացառիկ երկիրը, ուր վայն բաղկացնող 18 համայնքներէն եօթը կարեւորներէն մէկը դարձաւ հայութիւնը, եւ ուր հայերէնը, հայոց պատմութիւնը եւ հայ մշակոյթին առընչուող դասանիւթերը անկաշկանդօրէն ուսուցանելը հնարաւոր դարձան, ինչպէս էր

պարագան բոլոր համայնքներուն:

Նոյնպէս, Լիբանանի մէջ հայ գիրքն ու մամուլը գտան այն բերրի հողը, ուր, ինչպէս վերջերս հրատարակուած «Լիբանանահայ Գիրքը» մատենագիտական աշխատասիրութիւնը կը հաստատէ, աւելի քան եօթ հազար հայատառ գիրք լոյսին է եկած:

Նոյն շրջանին, 300-է աւելի մեծ ու փոքր պարբերական հրատարակութիւն լոյս ընծայուած է: Այսօրուան դրութեամբ, աւանդական հայ երեք կուսակցութիւններուն գլխաւոր օրկանները, օրաթերթերը, հոն լոյս կը տեսնեն, մին՝ արդէն 86 տարու, միւս երկուքը՝ 77 տարեկան: Սփիւռքի կշիռ ունեցող երկու գրական պարբերաթերթերը հոն է որ լոյս կը տեսնեն, այլ պարբերական հրատարակութիւններու կողքին: Նմանապէս՝ հարուստ բովանդակութեամբ երկու հայագիտական տարեգիրքեր:

Նոյն պատկերը, նուազ տարողութեամբ, կարելի էր գտնել Միջին Արեւելքի այլ երկիրներու մէջ: Յատկապէս քաղաքական պատճառներով՝ հայ գիրքն ու մամուլը աստիճանաբար որոշ կաշկանդումի ենթարկուեցան:

Վերջին մի քանի տասնամեակներուն՝ քաղաքական, տնտեսական, ապահովական ու ընկերային պայմաններու գլխիվայր շրջումով, Միջին Արեւելքի հայութեան թիւը, որ շուրջ կէս միլիոնի կը հասնէր, այսօր վերածուած է կէսի: Նոյնիսկ կէսէն ալ նուազ:

Պատկերացուցէք Լիբանանը. 1975-ին, Լիբանանի քաղաքացիական կռիւներու նախօրէին, հայ դպրոցներու թիւը կը հասնէր 60-ի, շուրջ 21 հազար ուսանողներով: Այսօր դպրոցներու թիւն է 27, իսկ ուսանողութեանը՝ շուրջ 6500, նոյնքան մըն ալ՝ պետական եւ սեփական ոչ-հայկական դպրոցներու մէջ: Մամուլի

տպաքանակը, միջին հաշիւով, նոյն համեմատութեամբ նուազած է: Նոյնն է պարագան Սուրիոյ: Մանաւանդ վերջին տարիներուն՝ ողբերգական: Արտագաղթի տխուր երեւոյթին պիտի չուլէի անդրադառնալ: Ան կը հարուածէ ե՛լ հայրենիքը ե՛լ Միջին Արեւելքի երկիրները:

Սակայն, արտագաղթը Միջին Արեւելքէն, պատճառ դարձաւ նաեւ արտահոսքին մտաւորականներուն, երիտասարդներուն, որոնք կոչուած էին փոխարինելու երէց սերունդի հայերէնի դասատուները, մամուլի գործիչները եւ ընդհանրապէս ազգային կառոյցներու վարիչները: Խօսքը հիմնականին մէջ կը վերաբերի դասական տպագիր մամուլին եւ լեզուի դասական ուսուցումին:

Անցեալին՝ Միջին Արեւելքը,- յատկապէս Լիբանանն ու Սուրիան,- այս ուղղութեամբ կը գոհացնէր Արեւմուտքի՝ Եւրոպայի եւ Վոյգ Ամերիկաներու պահանջները: Իսկ այսօր, Միջին Արեւելքը ի՛նք կարիքը ունի հայագիտական դասանիւթերը աւանդող գիտակ ու ատակ ուսուցիչներու: Մեր մամուլը վարող պատրաստուած ուժերու: Մեր ազգային կառոյցները առաջնորդող երիտասարդ ու բանիմաց ուժերու:

Դժբախտաբար այս բոլոր մարպերուն մէջ որակն է, որ բացակայ է: Քիչ են բացառութիւնները:

Տարիներէ ի վեր կ'արժարծուի արեւելահայերէնի դասական ուղղագրութեան վերադարձի հարցը՝ մէկ լեզու, մէկ ուղղագրութիւն լոյունգով: Լոյունգները, որքան հմայիչ, սակայն ըլլալու են գործնական, ապա՝ գործադրելի: Վերջին տարիներուն կը լսուին արեւմտահայերէնի պաշտպանութեան ի ինդիր ստեղծուած յանձնախումբերու մասին: Տարդ՝ գործնական ո՛չ մէկ քայլ:

Նախքան մեծամեծ, յաճախ ալ՝ անիրագործելի, ծրագիրներ

առաջադրելու փոխարեն, նախ կարգի դնենք արեւմտահայերէնի ներքին խոհանոցը: Օրինակ ունենանք լիբանանահայ մամուլը, ուր կը վիտան լեզուական արտառոց սխալներ, կը բացակայի ուղղագրական, կէտադրական, տառադարձական օրէնքներու նոյնաձեւութիւնը, գլխագիրներու սանձարձակ եւ այլանդակ օգտագործումը: Այլ խօսքով՝ քերականական միասնական օրէնքներու որդեգրումը: Այս մատնանշումները կարելի է տարածել սփիւռքահայ ամբողջ մամուլին վրայ:

Ելրակացութիւն.

Ներկայիս, սփիւռքահայ մամուլը, ի մասնաւորի Միջին Արեւելքի դասական տպագիր մամուլը կը տառապի արհեստավարժ, հայերէնի հմուտ եւ փորձառու մասնագէտներէ, ինչպէս հայ դպրոցը՝ հայերէն լեզուի մակարդակաւոր դասատուներէ:

Ուստի, հայրենիք եւ սփիւռք, միասնաբար եւ անյապաղ լծուելու են աշխատանքի՝ պատրաստելու համար անհրաժեշտ քատրերը, որպէսզի օր մը, եւ ոչ հեռու ապագային, մենք մեզ չգտնենք անապատային ամայութեան մէջ:

ԺԻՐԱՅՐ ԴԱՆԻԷԼԵԱՆ